

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.

ԱՍՏՈՒ  
ԴԱՏԱՍԱՆԸ

ԵԿ

ՅՈՒԼՅԻ ԵՐՑԻ ՄԻՏԻ Ն

ԳԻՒՆ Է 5 ԿՈՊ.


391.99

f-17



ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՔՏՐ. ՏՊԱՐԱՆ «ՀՊՕԽԱ»

1911



-6 NOV 2011

ԹԱՐԱՎԵԱՆՑ Ա.

894.99

Բ-17

ԱՅՍՏԾՈՒ

# ԴԱՏԱՄԱՆՆ

ԵԽ

## ՇՈՒԼԱԿԻՔԻՑԻ ՄԻՏԻՆ

100  
4530

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.



ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՔՏՐ. ՏՊԱՐԱՆ «ԵՊՈԽԱ»  
1911

ԹԵՓԼԻՍԻ գրախանութերում վաճառ-  
ում են մեր գրքերը.

Աստծու դատաստան—5 կ: Սրտաշան  
բաներ—25 կ: Ծովինար—25 կ: Շեն քազա-  
նոր—25 կ: Երկու աղբերացեղ—30 կ: Աս-  
տուած աղբատ—20 կ: Հերիաքներ—30 կ:  
Երկու գրոյց—25 կ: Ընմեռ աղխարհ—8 կ:  
Աղջային առակներ—25 կ: Աստուած չը ճա-  
նաչող—10 կ: Դալօ ափօ—12 կ: Ժամանակը  
ուսի—40 կ: Սիրտ գրքից—40 կ: Քաջ Աղա-  
սի—25 կ: Սասունցի Ծովինան—30 կ: Խոռլ  
Խաչիկ—25 կ: Երկասիրութիւններ—50 կ:  
Ներերի գրոյցներից—20 կ: Վարդանանց են  
Ղեւոնդեանց մասին: Գրոյց—30 կ: Փոքրոգի  
բարեկամներ—15 կ:

Կրօնի դասագրքեր—Կրօն, Ա. տարի  
15 կ: Բ. տարի—20 կ: Գ. տարի—35 կ:  
Կրօնի դասաւութիւնը. Ա. բաժ. ձեռնարկ  
ուսուցչի համար 40 կ:

Գումարով կանխիկ գնողներին  $25^0/0$   
զեղջ. Հեղինակի հասցէն՝ Տիֆլ. Մի-  
հայլ. սլ. № 82, քվ. № 9.

29.08.2013

60284

## ԱՍՏՈՒ ԳԱՏԱՏԱՆ

Մի աղքատ գիւղացի գնում էր  
քաղաք գործ գտնելու: Երկու ճամբի  
խառնուրդում պատահեց նա մի ուրիշ  
գիւղացու և հարցընեց:

— Ո՞ւր ես գնում, եղբայր:  
— Քաղաք վաստակ անելու, ա-  
սեց երկուրդը:

— Դէ որ դու էլ ես այդ մտքին,  
շատ բարի, գնանք միասին:

Երկսով զրոյց անելով քաղաքի  
ճամբէն բռնած գնացին:

Իրար հետ այնքան մտերմացան, որ  
խօսք տուին միևնոյն քաղաքում գործ  
գտնել, որոշեալ ժամանակ աշխատելով  
վաստակ անել ու միասին հայրենիք  
վերադառնալ, պսակուել:



Առաջին գիւղացին շատ պարկեցա  
ոքմին էր, գործի մտաւ մէկ մարդու  
մօտ ու շարունակ մնաց: Հաւատար-  
մութեան համար տէրը շատ սիրեց նը-  
րան ու առատ վարձատրեց: Ծարաւ  
էր խօսք ու շնորհք սովորելու, լսած  
խրատներն ականջում պահում էր, Շը-  
ռայլութիւնից փախչող էր, զուր տեղ  
կոպէկ չէր մսխում: Պարապ նստած  
նրան ոչ ոք չէր տեսնիլ, Տիրոջ գոր-  
ծը վերջացնելուց ետ իրա համար գրել  
կարդալ էր սովորում: Այդ արժանիք-  
ների համար տէրը տարէց տարի նրա  
ոռճիկն աւելացնում էր:

Երկրորդ գիւղացին ընդհակառակ,  
մի անհամբեր, հաստավիզ երիտասարդ  
էր: Ում մօտ գործի էր մտնում, եր-  
կար չէր դիմանում, ամսէնը մի տեղ  
էր փոխում, այն էլ միշտ կոռուպվ, միշտ

մեծ անբաւականութիւնով: Միալար  
աշխատել չէր սիրում, միանգամից էր  
ուզում բարձրանալ ու հարստանալ:  
Զեռն ընկած կոպէկները պահելու փո-  
խարէն վատնում էր փուչ մարդկանց  
հետ: Մեծ ընկերի տուած խորհուրդ-  
ներին չէր լսում: Զոի ոքմին էր, ոչ  
քաղաքավարութիւն էր սովորում, ոչ  
գիր կարդալ, ամեն բանից աւելի իրա  
մարմինն էր պաշտում, ոտ ու գլուխ  
զուքած պահում: Մեծամիտ էր. դրա  
համար ոչ ոք նրան չէր սիրում: Նրա  
անունն էր Մոլի: Միւս ընկերը, ո-  
րին Ուշիմ էին կանչում, տարիներ անց-  
նելուց ետ յայտնեց Մոլուն:

— Ես ուզում եմ գնալ հայրենիք  
պսակուելու, դու ի՞նչ ես անում:

— Ես էլ եմ գալիս, պատասխա-  
նեց զուարձասէր Մոլին, որ ուտել խը-

մելուց խոզի պէս գիրացել, ուժեղացել էր: Ճամբայ ընկան դէպի գիւղ: Ոտով էին գնում: Հանգիստ զրոյց անելով վերադառն այն տեղը, ուր առաջին անգամ իրար պատահել էին: Ուշիմը շալակի տոպըրակը գետնին դնելով ասեց:

Եղբայր, տարիներ առաջ այստեղ ընկերութեան ուխտ կապեցինք, երբ ոչ մի սև փող չունէինք: Այժմ, փառը Աստծու, վաստակ ունենք: Արի նստենք և մեր ունեցածը մէջ բերելով հաւասար բաժանենք:

**Մոլին պատասխանեց.**

Քու առաջարկին հակառակ չեմ, ցանկանում ես, նստենք, բայց իմ զարդարուն հագուստին մի նայիլ, ես հաւաքած փող չունեմ, որ քեզ հետ բաժանեմ:

— Ինչ անենք, որ չունես, եղբայրութիւն է, վերցրու իմ վաստակի կեսը, ասեց Ուշիմը և իրա վաստակած ոսկիները երկու հաւասար բաժին արեց:

Դեղին պսպղղան ոսկիները տեսնելով Մոլին գլուխը կորցրեց, աչքերն ագահութիւնից վառուեցին: Ուշիմին իրա բարեսիրտ արարքի համար շնորհակալութիւն անելու փոխարէն, կատաղի ցատկումով վեր թռաւ տեղից ու նրա կոկորդից ամուր բռնեց:

— Ի՞նչ ես ուզում, եղբայր, ինչու ես ինձ խեղդում, հազիւ շունչ քաշելով հարցրեց Ուշիմը, փող չունէիր, փող տուի:

— Ինչու դու իմ չափ ոսկի ունենաս, չէ՞ որ իմ պահանջները քոնից շատ են և ես քեզանից ուժեղ եմ, խրոխտաց արիւնակալած աչքերով Մոլին և դանակը գրպանից հանեց:

—Եղբայր, եթէ կէսը քիչ է քեզ,  
իմ բաժին ոսկիքն էլ վերցրու, միայն  
թէ դանակը մի բաց անիլ, աղաղակեց  
նրա զօրեղ մատների մէջ ճնշուած  
բարեսիրտ ընկերը։

—Զէ, քեզ պիտի սպանեմ, թէ չէ  
ետնիցս կը գաս և ինձ դատաստանի  
ձեռ կը մատնես։

—Վերցրու, Եղբայր, բոլոր ոսկի-  
քը, քո մօր կաթի պէս հալալ լինի, քո  
ետնից մի քայլ եկողը չեմ, միայն թէ  
ինձ անմնաս թող, որ գնամ, նորից վաս-  
տակ անեմ։

—Զէ, քեզ պէս խորամանկ մար-  
դուն հաւատալ չի կարելի, վերջն ինձ  
փորձանքի մէջ կը գցես, աւելի լաւ է,  
քեզ սպանեմ ու գնամ այս փողերով  
պսակուեմ, տուն տեղ դնեմ։

Մոլին այս ասելով նրան ծնկան

տակ սեղմեց ու դանակը բաց արեց, որ  
վզին քսի։ Այս վայրկեանին Ուշիմը դող-  
դոջուն մատներով նրա բազուկը ետ  
բաշեց ու խրխըռալով աղաչեց։

—Մի ողորմութիւն եմ խնդրում,  
լոիր։

Մոլին ծնկով սղմելը քիչ թուլաց-  
րեց։ Բարեսիրտ ընկերը տակից խօսեց։

—Զէ որ շատ անգամ դու ինձ  
եղջայր ես կանչել։ Ի սէր այդ սրբա-  
զան խօսքի, վիզս մի կտրիլ։ Եթէ քո  
ցանկութիւնն է, որ ես տեղիցս չըշար-  
ժուեմ, երկու ոտներս կտրիր։ Մինչեւ  
արիւն բամուելը թող գոնէ այս սիրուն  
դաշտերին, բարձր լեռներին, կապոյտ  
երկնքին նայեմ։ Աղաչում եմ, այդ չըն-  
չին միսիթարութիւնն ինձ մի խնայիլ։  
Դու գնա հանգիստ պսակուիր ու քաղ-  
ջըր վայելչութիւն քաշիր։

— լաւ, երբ աղաչելով արտասուք  
ես թափում, այդքան զիջողութիւն կա-  
նեմ, ասեց անգութ Մոլին ու դանակը  
քաշեց, ոտները ծընկներից ներքև մէկ-  
մէկ կտրեց, թողեց ընկերին վէր ընկած,  
ինքը ոսկու տոպղրակն առաւ ու գնաց:

Ուշիմը սրտի զարմանալի քաջու-  
թեամբ դիմացաւ, յաղթեց զարհուրելի  
ցաւերին. մի քանի ժամ մեծ չարչա-  
րանքով մօտիկ բոյսերը պոկտում էր,  
դնում կտրած տեղերին: Մի կերպ ա-  
րիւնի հոսումը դադարեցրեց: Պաշարի  
տոպղրակը մնացել էր անարատ, Մոլու-  
ձեռը չէր դիպել. այդ պաշարով վիրաւո-  
րը մի երկու օր անցկացրեց, մինչև կըռ.  
ների օգնութեամբ մի կերպ սող տալով  
հասաւ մեծ ճամբի իջևանը:

Նրա բաղդից այստեղ իջած էր մի  
վաճառական. ծընկնատի դուրեկան դէմ-

քը տեսնելով կարեկցութիւն զգաց,  
մօտեցաւ հարցըրեց.

— Ի՞նչ է պատահել, այ մարդ, ով  
է քեզ թշուառացրել:

— Ե՛, աղա, ի՞նչ ասեմ. գնացի պան-  
դըխտութիւն, բաւական ոսկի վաստակե-  
ցի, տուն վերադառնալիս աւազակները  
յարձակուեցին, մօտիս ոսկիները յա-  
փշտակեցին, ինձ հետ էլ այսպէս անո-  
դորմ վարուեցին:

Վաճառականը փափկասիրտ մարդ  
էր, այդ լսելով արտասուեց և հրամա-  
յեց ծառաներին, որ վիրաւորին խնամ-  
քով տեղաւորեն մի ջորու բեռան մէջ-  
տեղ: Հասցըրեց իրա տուն, առանձին սե-  
նեակ տուեց, որ ապրի մինչև վէրքերի  
լաւանալը: Վաճառականի գթոտ կինն  
իրա կարեկցութիւնն աւելի մեծ չափով  
ցոյց տուեց, ծընկների վէրքերը բաց ա-

բեց, բժըշկի տուած դեղերով լուաց, սպե-  
ղանի դրեց, կրկին կապեց։ Այդպէս  
խնամում, փաթաթում էր մինչև բոլո-  
րովին վէրքերը առողջացան. այնուհետև  
չըթողեց, որ իրա յարկի տակից ծընկ-  
նատը հեռանայ։ Մարդուն ասեց.

— Աչքի լոյս, սա պիտի գնայ դոնէ  
դուռ մուրայ, որ թշուառ գոյութիւնը  
պահպանի։ Աստծու սիրու, այսքան  
վարձք անելուց ետ արի մեր տանը մի  
սենեակ յատկացնենք սրան, մշտական  
մնայ իբրև զրոյցընկեր։

Վաճառականը կնոջ առաջարկը սի-  
րով ընդունեց և յայտնեց ծնկնատին.

— Ուրիշ տեղ գնալու կարիք չու-  
նես, իմ տանը ամեն բան պատրաստ  
է քեզ համար՝ թէ հագուստ, թէ սնունդ  
և թէ բնակարան։

Ուշիմը շնորհակալութիւն արեց

ու մնաց նրանց մօտ իբրև ընտանիքի  
անդամ, վաճառականը հետզհետէ սրան  
այնքան սիրեց, որ վստահացաւ իրա  
գործերի բոլոր գաղտնի կողմերը նրա  
մօտ բաց անել։ Ծընկնատի նուրբ խելքն  
ու փորձառութիւնը նրան այնքան էին  
գրաւել, որ առանց նրա խորհրդի ո-  
չինչ չէր անում։

Այդ բարի վաճառականն ամեն  
փառք ունէր՝ թէ գանձ, թէ կալուած,  
թէ սիրուն երիտասարդ կին, բայց մի  
բան չունէր, որ գիշեր ցերեկ նրան  
հալում մաշում էր։ Անզաւակութիւնը  
խոր ցաւ էր դառել նրա սրտին. այդ  
ցաւից էլ հէնց կոտրուեց, ընկաւ ան-  
կողին ու մեռաւ, իրա բոլոր կարողու-  
թիւնը կտակելով կնոջը։

Նրա մահից ետ շատ երկելի վա-  
ճառականներ, որոնք վաղուց աչք ունէ-

ին վաճառականի կնոջ վրայ, միջի մարդիկ ուղարկեցին նրա մօտ: Բայց կինն անկախ կամքի տէր ոքմին էր, ամենին էլ մերժեց: Ուշիմը, որի արժանաւուրութիւնները քաջ յայտնի էին գեղեցիկ կնոջը, չը գիտէր, որ ինքն է տիրուհու հաւանած տղամարդը, ուստի մի օր շատ զարմացաւ, երբ վաճառականի կինը նրան դառնալով այսպէս խօսեց.

— Իմ հանգուցեալ ամուսինը քո աղնուութեանն անպայման հաւատում էր. նրա գործերի գաղտնիքները միայն քեզ են յայտնի. երկար տարիք դու ես եղել նրա խորհրդատուն: Նրա գործերը շարունակելու համար քեզնից յարմար անձ չեմ գտնիլ, արի եղիր իմ ամուսինը և կառավարիր խանութը, ինչպէս որ գիտես:

Ծընկնատն այդ անակնկալ շնորհի համար Աստծուն սրտագին գոհութիւն

արեց ու առաքինի կնոջ առաջարկն ընդունեց անհուն ուրախութեամբ: Պսակուեցին: Կինը ծառաներից մէկին նըշանակեց, որ ամեն օր նոր տիրոջը շալակի, տանի խանութ և երեկոյեան բերի տուն: Նախկին վաճառականի մահով գործերը մազաչափ էլ չը մնասուեցին, որովհետեւ նրան փոխարինողը շատ կարճ միջոցում ընդհատուած գործերին հիանալի ընթացք տուեց և վաճառականների շրջանում մեծ յարգանք ձեռքերեց: Աստուած օրհնեց նրա կնոջը. տարու զլսին մի արու զաւակ ունեցաւ: Երկար ժամանակ ամուլ մնացած կնոջ համար դա անպատմելի երջանկութիւն էր: Այնուհետեւ ունեցաւ ուրիշ զաւակներ ևս: Կինը հաւատացած էր, որ Աստուած հատուցանում է ծընկնատին ցոյց տուած կարեկցութեան համար:

Բաւական տարիք էին անցել դրա  
վրայով. ծընկնատը քաղաքում համար-  
ում էր առաջին վաճառականը. Մի օր  
խանութում նստած ժամանակ տեսաւ  
մի յաղթանդամ մարդ, ձեռը մեկնած,  
փողոցում ողորմութիւն է խնդրում:  
Կանչեց ու հարցրեց.

—Այ մարդ, Աստուած քեզ առողջ  
ձեռ ու ոտ է տուել, ինչու չես բանաց-  
նում, որ մուրացկանութիւն ես անում:

—Աղա, խօսեց մուրացկանը, մի  
քար վեր կար, գլխիս խփիր. պստըկուց  
ոչ ոքի խրատի ականջ չը դրի, գոռո-  
ղութիւն արի, շնորք չըսովորեցի, իմ  
բաժինը մնաց ցեխ կըելով մշակութիւն  
անելը: Դրանով ընտանիք պահել չի լի-  
նում, մնացել եմ անճար. երբեմն քիչ  
է մնում ձեռներս կացնի տակ դնեմ ու  
կտրեմ, որ ապրուստ ճարելու պէտք

չեն գալիս:

Մուրացկանի ձայնի վրայ Ուշիմի  
ծանօթն եկաւ. սկսեց այսպէս սիրտ տալ.

—Մի յուսահատուիլ, եթէ ընտա-  
նիք ունես, ես քեզ պաշտօն կը տամ:  
Այս գլխից էլ քեզ փող կը տամ, որ  
ուղարկես տուն, կնիկդ, երեխէքդ հան-  
գիստ ապրեն:

—Ա՛յ, Աստուած քեզ երկար  
կեանք տայ, աղա, ուրախացած գոչեց  
աղքատը, ինչ ծառայութիւն ուզում ես  
տուր, ինչքան էլ կեղտոտ բան լինի,  
ես կը կատարեմ, միայն թէ ընտանի-  
քիս մօտ դատարկ ձեռով չերևամ:

—Դատարկ չես երևալ, միամիտ  
կաց: Քո պաշտօնն այն պիտի լինի, որ  
ամեն առաւօտ ինձ շալակած տանից  
բերես այստեղ և երեկոյեան տանես  
տուն: Ամբողջ ցերեկն ապատ ես: Եթէ

քեզ համար ստորութիւն չի այդ տեսակ ծառայութիւնը, կարող ես այս օրուանից սկսել:

— Ամենայն ուրախութեամբ ընդունում եմ, պատասխանեց յաղթանդամ մարդը, երբ ցերեկն անելու բան չեմ ունենալու, ոոճիկս թող միւս ծառաներից պակաս լինի:

Այս խօսողը նախկին Մոլին էր, որ սկզբում ամենեին մաքով չանցկացրեց, թէ իրա ձեռով թշուառացածն այսպիսի երևելի վաճառական դարձած կը լինի, ինքն արտաքինով շատ փոխուած էր, հագուստը քրքրուած, ճակատը կնճիռներով պատած, բեղ ու միրուք երեսը կալած, բնաւորութեամբ կոտրուած, Դժուար էր նրա մէջ ճանաչել առաջուայ ամբարիշտ, գոռող երիտասարդին, բայց ծընկնատի սուր աչքն իսկոյն

ճանաչեց, սրտում Աստծուն շնորհակալ եղաւ, որ բերել է ապերախտ ընկերին, կրկին պատահեցրել: Վրէժխնդիր լինելու լաւ տեղն էր, սակայն նա վեհանձնութիւնով պատժելը գերադասեց: Բոլոր ծառաներից բարձր նրան էր ընդունում ու միշտ հետը քաղցր վարւում: Շատերի նախանձը գալիս էր յաղթանդամ ծառայի վրայ, որ փոքրամարմին հարուստ վաճառականին ուսերին նստաշրած տանում էր խանութ, բերում և այդ թեթև ծառայութեան համար նոյն ոոճիկն էր ստանում, ինչ որ ուրիշները: Միայն վաճառականին էր յայտնի, թէ ինչ անտանելի բեռն է ինքը ծառայի համար, կնոջն անգամ այդ մասին բան չէր ասում:

Մոլին չորս տարի ծառայելուց ետ կամեցաւ գնալ ընտանիքին տեսութեանը

— լաւ ես անում, գնա, ասեց  
տէրը: Քեզ տարեկան հասնում է այս-  
քան գումար, ես քսան ոռւբլի էլ աւե-  
լի եմ տալիս ազնիւ ծառայութեանդ  
համար: Բացի այդ՝ ահա այս ընծան իմ  
կողմից կը տաս կնոջդ, այս միւս ըն-  
ծաներն էլ որդկերանցդ: Աստուած բա-  
րի ճանապարհ տայ, գնա: Եթէ վերա-  
դարձին կամենաս ծառայել ինձ մօտ,  
ուրախութեամբ կընդունեմ. արի, քեզ  
համար դուռս էլ է բաց, գրպանս էլ:

Տիրոջ այս սիրալիր վերաբերմուն-  
քի միջոցին ծառայի դէմքի վրայ նկա-  
տելի էր անասելի տանջանք: Բայց ար-  
տասուքի տեղ քրտինք էր ծլծում նրա  
թուշերից: Վաճառականը առանց նրան  
հարցնելու թէ ինչու է տանջում, սառ-  
նասիրտ կերպով թողեց նրան ու ուրիշ  
ծառայի շալակին գնաց խանութ:

Մոլին կանգնած էր խիստ ընկճու-  
ած հոգով, քրտինքը գոլորշիացած բարձ-  
րանում էր նրա խաշուող գլխից և բաց  
կրծքից, դէմքը հնոցի պատի պէս կարմ-  
րել էր. ինչպէս երեսում էր՝ նրա սիր-  
առ տակն ու վրայ էր, հազիւ էր կա-  
րողանում շունչը հաւաքել: Վաճառա-  
կանի կինը կարծեց թէ իրա ամուսնու  
չափազանց բարեսրտութիւնից է յու-  
զուել, դրա համար հարցրեց.

— Մեր տանը շատ ծառաներ են  
եղել, ոչ մէկի հետ ամուսինս այնքան  
քաղցը չի վարուել որբան քեզ հետ:  
Ի՞նչ է պատճառը, որ դէպի քեզ ա-  
ռանձին սէր է զգում, ի՞նչ հին բա-  
րեկամութիւն կայ ձեր մէջ, որ բա-  
ցի ոռմիկդ աւելորդով վճարելուց, այլ  
և թանկագին ընծաներ տուեց քո տան  
բոլոր անդամներին: Մի ծածկիւ, ի՞նչ

լաւութիւն, որ արել ես ամուսնուս,  
բաց համարձակ ասա, որ ես էլ իմ  
կողմից շնորհակալութիւն անեմ:

Ծառան մոլորուած հայեացքը գետ-  
նին ուզդած, յիշողութիւնը փորփորում  
էր ու չէր իմանում ի՞նչ պատասխան  
տայ իրան հարց տուող բարեսիրտ տի-  
րուհուն: Իրա գործած ըըստմընելի ա-  
րարքը մտքում վերյիշելով, կանգնած  
տեղը անխօս սարսափում ու գողում  
էր: Տիրուհին դողոցի պատճառը չըհա-  
կանալով երկրորդ անգամ հարցը: Ծոլին շարունակեց լուռ մնալ, սաստ-  
կացնելով միայն դողն ու քրտինքը:  
Վերջը երրորդ անգամ տիրուհին դիմեց.

— Ա, խր, ինչո՞ւ հարցիս պատասխան  
չես տալիս:

Ծառան տանջուած դէմքը գետնից  
հեռացնելով նայեց նրան ու խեղդուկ  
ձայնով ողորմագին խօսեց.

— Ի՞նչ ասեմ, բարի տիրուհի, ախր  
լեզուս չի գալիս, արած բանս ի՞նչպէս

ասեմ...»:

— Ինչո՞ւ, հարցը ամբուհին կա-  
րեկից սրտով:

— Որովհետև անչափ դժուար է.  
աւելի լաւ կը համարեմ մեռնել, քան  
թէ իմ արածն այս ըոպէիս քեզ լե.  
զուով պատմել, անհուն տանջանքով  
խօսեց Մոլին... միայն, երբ ստիպում  
ես, այսքանը կասեմ, ողորմած տիրու-  
հի, — ինչ որ իմ և քո ամուսնու մէջ  
պատահել է, դրա մեղաւորին թող Աս-  
տուած դատի...:

Այս վերջին բառերն ասած չասած  
Մոլու ոտի տակ գետինը պատառուեց  
և նրան խաւար անդունդը տարաւ: Տի-  
րուհին սուր ճիչ հանելով սարսափեց,  
յետոյ եղածի վրայ մնաց շուարած ու  
անսահման վշտացած: Ամբողջ օրը  
ծընկներին ձեռով խփում էր ու ափսո-  
սում, թէ ինչո՞ւ զուր տեղ պատճառ  
դառաւ խեղճ մարդու կորստեան:

Երեկոյեան ամուսինը միամիտ ե-

կաւ խանութից տուն և կնոջը տխուր  
գտնելով պատճառը հարցրեց։ Երբ կի-  
նը սարսափելի եղելութիւնը միառմի  
պատմեց, մարդը վշտացած գոչեց։

— Վայ քու խէրը կտրուի, կնիկ։  
Ինչու էիր այդպիսի հարցեր տալիս,  
երբ նկատում էիր, որ նա ներսում,  
սրտի մէջ այրուելով տանջւում է։ Այսը  
նա իմ ծընկներ կտրող, ինձ թշուառաց-  
նող մարդն էր, որին Սստուած ինձ  
մօտ էր ուղարկել, որ նրա անգիտու-  
թեան դէմ ես բարերարութիւն անեմ  
ու դրանով նրա հոգու մէջ մի դժո-  
խային անշէջ կրակ վառեմ, որպէս զի  
այդ մարդը լուռ ու մունջ տանջուի  
խղճի ձեռից մինչև խորին ծերութիւն։  
Ինչու դու քո անհամբերութեամբ արա-  
գացրել ես Աստծու ահեղ դատաստանը  
և յանցաւորի տանջանքի ժամանակա-  
միջոցը կարճացրել...

## ՇՈՒԼԱԿԵՐՑԻ ՄԻՏԻՆ

Միտին մի անխոնջ, անդադրում  
ծերունի էր, զաւակները աղջկէք էին,  
ամենն էլ պսակուած։ Տան տղամարդը  
մենակ ինքն էր, 85 տարեկան, պողու-  
ատի պէս ամուր ու աւողջ։ պատճառն  
իրա զարմանալի աշխատասիրութիւնն  
էր. պարապ նստել չըգիտէր, միշտ մի  
գործով փթփըթում էր. տանն եղած  
ժամերին կացնով փայտ էր կտըրտում,  
դարսում կամ ուրագով տաշ անում, որ  
քունը չըտանի։ Եթէ կտըրելու կամ տա-  
շելու փայտ չէր լինում, բակի բարերը  
խտըրում, մի կողմից միւսն էր տե-  
ղափոխում, որ արիւնը շարժուի, ջանը  
չը ծանրանայ։ Ապրուստի լաւ միջոց ու-

նէր, բայց ծառայի յուսով ոչինչ չէր  
անում, ծեր ժամանակ էլ այգին իրա  
ձեռով էր շինում. առաւօտից մինչև ե-  
րեկոյ միալար բանում էր ու չէր յոգ-  
նում:

Հոյսը բացուելուն պէս բահը վերց-  
րած այգին էր գնում. վարում էր մի  
ժամ ու բահը թողնելով ցաքատն էր  
ձեռ առնում, սարի սրում: Կէս ժամից  
ետ ցաքատը թողնում, թոխին էր վէր  
կանում, վարած տեղը փափկացնում,  
ճմբերը մանրացնում: Մի ժամից ետ  
թոխին վէր զցելով սկսում էր պատու-  
աստ անել, ծառերի տեսակն ազնուաց-  
նել: Յետոյ այդ թողում, կտըրտած ճախն  
էր ծալում, կապուկ անում: Վերջն էլ  
այդ թողում, ուրիշ բանի ձեռ տալիս:  
Միաին սովորութիւն չունէր շարունակ  
մի գործով զբաղուելու, օրէնը տաս

տեսակ բան էր շինում:

— Ինչու առաւօտից մինչև երեկոյ  
մի բանի վրայ չես մնում, հարցնում  
էին նրան:

— Բոլորն էլ իմ անելիք բաներն  
են, պատասխանում էր ծերը, ոչ ով  
ձեռիցս չի խլելու. հանգստութեան հա-  
մար փոխփոխում եմ ու ամեն մինը  
եռանդով սկսում շինել:

Միաին ջահէլ միջոցին հողագործ  
էր և խստ հարկանասէր. ում ինչ գոր-  
ծիք որ պակասում էր, կալի թէ գու-  
թանի համար, առանց խնայելու բան  
էր տալիս, «չէ» խօսքը չըկար նրա բե-  
րանում: Երբեմն վատ հարկանները տա-  
րած գործիքները մտահան անում, ժա-  
մանակին չէին դարձնում, կամ եթէ  
դարձնում էին — միշտ կոտրած կամ  
փչացած: Այսպիսի դէպքերում կնիկը

յանդիմանում էր Միտուն. «Հախըդ է,  
երբ տարածը մարդավարի ետ չեն քե-  
րում, ինչու ես նորից տալիս»:

Միտին մեծահոգութեամբ համբե-  
րում էր վնասներին ու կնկանը խրա-  
տում.

— Կնիկը մարդի գործում չըպիտի  
խառնուի, դու իլկի, ճախարակի ետնից  
կաց, կերակուր եփիր:

Սակայն ժամանակ անցնելուց ետ  
գէշ հարևանները Միտուն այնքան զգու-  
եցին, որ նա երդում կերաւ, էլ հա-  
րևանի ապրանք չըտալ: Եւ երդումը ա-  
մուր պահեց, մինչև ամառ լուսացաւ:  
Հարևանի մէկի կամը կոտրուել էր ու  
կալը խափանուել: Ումնից որ կամ ու-  
ղեց, չը տուին. վերջը ճարահատ եկաւ  
Միտու կուշտը ու աղաչեց.

— Աստուածդ կը սիրես, ինձ օգ-

նութիւն արա, քո կամներից մինը ըան  
տուր, օրը ճաշ է դառել, կալս դեռ  
հաշան է:

— Երդում եմ կերել, հարևանի ծեղ  
անգամ չը տամ, ինչ թէ կամ, բայց  
երբ Աստծու անունով աղաչում ես,  
ի՞նչ անեմ, ահա արձակիր էդ եղան  
կամը ու տար, թող իմ գործը քիչ ետ  
մնայ. մարդս մինչև իրան վնաս չըտայ,  
չի կարող ուրիշին լաւութիւն անել:  
Միայն ինդրում եմ, վերջացնես թէ չէ,  
քո ձեռով իմ կամը բեր. դու գիտես,  
որ ես աւելորդ մարդ չունեմ:

— Աչքիս վրայ, Միտի, վերջացնեմ  
թէ չէ, իսկոյն բերեմ, ասեց հարևանն  
ու կամը շալակեց, տարաւ, բանացրեց,  
հաշանը կասեց ու թեղ դնելով սկսեց  
քամել: Ոչ թէ այդ օրը կամը չը բերեց,  
այլ առանց իրաւունք ինդրելու էգսի

օրն էլ բանացրեց, իսկ բարեսիրտ Միտին սպասում էր: Տեսաւ, որ հարևանն իրա խոստումը չը կատարեց, մեծահոգութեամբ ասեց ինքն իրան.

— Վնաս չունի, կարելի է նրա կարիքն իմից մեծ է:

Միտին իրա եզներին նեղացնելով երկրորդ օրն էլ կալը մի կերպ պրծաւու իրիկնադէմ երեխայ ուղարկեց հարևանի մօտ, որ կամը բերի: Հարևանը թեղը քամում էր, երեխին ասեց.

— Լաւ, դու գնա, ձեռիս գործը վերջացնեմ, կամը կը բերեմ:

Միտին բաւական ժամանակ սպասեց, տեսաւ, որ հարևանը ուշ չի դարձնում, կրկին երեխի բերանով ապսպըրեց.

— Կամն ինձ հարկաւոր է, բեր, ինչպէս խոստացել ես:

Հարևանը կոպտաբար բարկացաւ երեխի վրայ.

— Ի՞նչ էք զահլա տանում, բեր հա բեր: Են դուք, էն ձեր կամը. կերել չեմ, խմել չեմ, եկէք ու տարէք:

Այս խօսքերն այնպէս ճղաւելով ասեց, որ Միտին իրա կալում պարզ լսեց: Անմեղ երեխան վախեցած լալով եկաւ պատմեց: Միտին անչափ վշտացաւ, բայց ձայն չը հանեց. ձեռի գործը թողնելով գնաց գէպի գէշ հարևանի կալը. տեսնողները կարծեցին թէ կուռի է գնում: Բայց Միտին կալը հասնելով ոչ բարի խօսեց և ոչ չար. լուռ ու մունջ հանեց չուխէն, յետոյ հանեց շապիկը, մնաց մերկ, շապիկն ու չուխէն կոլոլելով դրեց կուան տակ, մօտեցաւ իրա կաման ու քարած կողմից դրեց տկողը մէջքի վրայ և անձայն ճամբայ

ընկաւ դէպի իրա կալը։ Հանդիպողները զարմացած հարցրին։

—Միտի, դու բանիբուն մարդ ես,  
ինչու տկլոր մէջքով ծանր կամ ես շա-  
լակել, Էն էլ քարած կողմից։ Լաշդ ա-  
րիւնոտուել է, այ մարդ, խելառ հօ չես։

—Մեծ խելառը այսուհետեւ կը լի-  
նեմ, եթէ լաւութիւն անելու համար  
հարևանին ապրանք բան տամ։ Իմ հա-  
խըն է, թող մէջքիս կաշին սուր քա-  
րերից պլոկուի ու մղկըտայ։ Քանի էդ  
մրմընջոցն ու մղկըտոցը յիշեմ, հարե-  
ւանին գործիք չեմ տալ, որ տանի մի  
օրուայ տեղ երկու օր բանացնի ու  
վերջն էլ ինձ շալակել տայ, ինչպէս  
էսօր։



ՀՀ Ազգային գրադարան



NL0378269

Թիֆլիսի գրախանութներում վաճառ-  
լում են մեր գրքերը.

Աստծու դատաստան—5 կ: Սրտաշահ  
բաներ—25 կ: Ծովինար—25 կ: Շեն բազա-  
նոր—25 կ: Երկու աղբերացեղ—30 կ: Աս-  
տուած աղքատ—20 կ: Հերթարներ—30 կ:  
Երկու գրոյց—25 կ: Ընմեռ աշխարհ—8 կ:  
Աղջային առակեներ—25 կ: Աստուած չը ճա-  
նազող—10 կ: Գալօ ափօ—12 կ: Ժամանակը  
ոոկի—40 կ: Սիրո գրքից—40 կ: Քաջ Աղա-  
սի—25 կ: Սասունցի Յովինան—30 կ: Խուլ  
Խաջեկ—25 կ: Երկասիրուրիններ—50 կ:  
Ներերի գրոյցներից—20 կ: Վարդանաց եւ  
Վեսնիեանց մասին. գրոյց—30 կ: Փոքրոգի  
բարեկամներ—15 կ:

Կրօնի դասագրքեր—Կրօն, Ա. տարի  
15 կ: Բ. տարի—20 կ: Գ. տարի—35 կ:  
Կրօնի դասատւութիւնը. Ա. բաժ. ձեռնարկ  
ուսուցչի համար 40 կ:

Գումարով կանխիկ գնողներին  $25^0/0$   
զեղջ. Հեղինակի հասցէն՝ Տիֆլ. Մի-  
խալ. յլ. № 82, կв. № 9.